

անցեր էր. զինուոր, գիտուն, տեղեակ աստուածաբանական ուսմանց, գործունեայ եւ առաքինի վարուբ կրնար լաւ օգնական լինիլ իրեն, աշխարհաշինութեամբ եւ խորհրդով:

Ներսէս արդէն մեզ ծանօթ սպան է, որովհետեւ զինք տեսանք երբեմն Բագրատունեաց Թաւուսկերտի պալատը: Չանագան եւ իրեն միայն յայտնի պատճառներով քահանայական կեանք ընտրելով քաշուեր էր աշխարհքն: Բագրատունեաց Տիկինը բռնի զինք Տայոց եպիսկոպոս ձեռնադրել աւեր էր, եւ հիմա Թեոդորոսի հրաւիրելով՝ ժողուեցան Նախարարք եւ եպիսկոպոսունք Դուին, եւ աւերակաց եւ դիականց վրայ զներսէս ընտրեցին կաթողիկոս:

Ազգաց վիճակին մէջ կան այնպիսի վայրկեաններ, որ պարտաւորութիւն ճանչցող մարդկանց խելօքները կընկրկին՝ փառքն եւ պատուէ կը հրաժարին: Ներսէս աշխարհք տեսած՝ փորձ եւ սրամիտ մարդ էր: Կը տեսներ Յայաստանի մայրաքաղաքը կոյտ աւերակաց, գերեզման անթաղ եւ նեխեալ դիականց, բնակարան գիշակեր թռչնոց, ցանուցիր ի բնակչաց, Նախարարք եւ իշխանք հարստահարող, կասկածոտ, տգետ, Նախանձոտ, քաջք միմեանց դէմ, վատք օտարին դէմ, ուտանիկք եւ ազատք խումբք աւազակաց եւ փոքրիկ բռնաւորաց, իսկ ռամիկք եւ շինականք անասնացեալ եւ խելագար եալ ի բռնութեանց եւ ի զրկանաց:

Այս տեսարանը զինք վիատեցուց եւ հրաժարեցաւ, բայց Նախարարաց՝ մանաւանդ Թեոդորոսի յորդորը մէկ կողմեն, իւր ընկերակից եպիսկոպոսաց մեծագոյն մասին անարժութիւնն ու տգիտութիւնը միւսեն զինք ստիպեցին եւ յանձն առաւ, եւ սկսաւ գործի: Թաղել տուաւ դիակունքը եւ գարշահոտութիւնը վերուց, այրած եկեղեցիները եւ կաթողիկոսարանը եւ հիւրանոցը Նորոգեց, պարիսպներն ամրացուց, պարտեզներ եւ այգիներ տնկեց եւ Գառնօ գետէ ջուր բերաւ ոռոգելու համար: Դուին շունչ առաւ կենդանացաւ քանի մը տարուան համար, աւերակաց վրայ պալատներ, տուներ եւ շուկաներ բարձրացան, բայց գերիները չի դարձանք եւ ամէն տուն իր կորուստները կ'ողբար: Աստուծոյ պատուհասն է, կ'ըսէին բեմերու վրայէն քարոզիչք եւ վարդապետք, ժողովուրդը ապաշխարութեան եւ ողորմութեան կը յորդորէին, եւ ժողովուրդը ամէն զոհողութիւն յանձն կամնուր, երբ զոհը ինքն էր, իւր զաւակը, իւր կինը, իւր ծնողքը, իւր եղբայրքը եւ իւր քոբքը, իր ստացուածով՝ պատուովը, որ զարմանք է թէ զգալու կարողութիւն դեռ ուներ:

Այո, այդ ազգին քով, զօր կրօնքը եւ գերդաստանի սերը պահած են կորստենէ մինչեւ այսօր ընտանեկան պատիւը միշտ կենդանի մնացած է, եւ հայ կինը